

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

N 104/120-2019


ք.Արտաշատ


27.06 2019թ.

ԱՐԱՐԱՏԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԱՎՏՈՐՈՒՍԱՅԻՆ /ՄԻԿՐՈԱՎՏՈՐՈՒՍԱՅԻՆ/ ԹԱՓՈՒՐ
ՄԱՑԱԾ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման» կարգով.

1. 02-006 «Արտաշատ-Նորաշեն» ավտոբուսային երթուղու սպասարկման իրավունքը մինչև 2020թ. հունվարի 11-ը ժամանակավորապես հատկացնել «Երջան և Արտակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:
2. 02-007 «Արտաշատ-Ոստան» ավտոբուսային երթուղու սպասարկման իրավունքը մինչև 2020թ. հունվարի 11-ը ժամանակավորապես հատկացնել «Արտաշատի ԲՈՒԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:
3. 02-021 «Արարատ-ՈԿՖ» միկրոավտոբուսային երթուղու սպասարկման իրավունքը մինչև 2020թ. հունվարի 11-ը ժամանակավորապես հատկացնել «Վեդու ԲՈՒԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Գ. Մուրադյանի վրա:

 Восстановимая подпись

X 

ԳԱՐԻԿ ՄԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN GARIK 2811870695

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ